ՈՒՂԵԳՐԱԿԱՆ

ԲՈԼՈՐԻ ՔԱՂԱՔԸ

* * *

Գօտկատեղիս բարձրութեան ուղղանկիւն փոքրիկ պատուհանով նայում եմ սենեակի ներսում՝ վանքի հին խոհանցում սնունդը մեքենայաբար տոպրակների մէջ դասաւորող Աշոտին։ Հայաստանցի է, քսան տարի առաջ է եկել։ Լուռ է, բծախնդիր, այս պարզ աշխատանքի մէջ նոյնիսկ լարուած։ Տոպրակների վրայ գեղեցիկ ձեռագրով գրում է սննդի հասցէատերերի անունները։ Արաբերէնի, արեւմտահայերէնի եւ եբրայերէնի յարակից աղմուկի մէջ իր հազուագիւտ արեւելահայերէն բառերը ականջս շոյում են։ Օրեր անց, երբ արդէն ծանօթներ ենք, Աշոտը անճանաչելի շատախօս է, վրդովուած ու բողոքաւոր, վիրաւորուած՝ մէկ իրեն Արցախի առաջին կռւում չմիացածներից, մէկ տեղի անտարբերութիւնից, մէկ կեղծ-հայերից։ Յաճախ հայհոյում է։ Աշոտի հոգին վերքեր ունի։

* * *

Սուրբ քաղաք այցելութիւնը հայրենադարձութիւն է՝ զուգահեռ ընտրեալ ժողովրդի հայրենադարձութեանը։ Հրեաների համար այն պատմական հայրենադարձութիւն է, որն ի հարկէ հետեւում ունի գաղափար, նուիրում, կարօտ, աշխատանք, հաւատ, ինքնութիւն եւ այլն։ Քրիստոսին սիրողների համար էլ այն իրերի հակառակ դասաւորութիւնն ունի. մարդիկ այստեղ են գալիս նախ սուրբ ձգտումով, դեռ անծանօթ կարօտով, աւելի մեծը դառնալու իղձով, հաւատքի նորոգման սպասումով եւ այդ ընթացքի մէջ յանկարծակի յայտանբերում են, որ այս այցելութիւնը հայրենադարձութիւն է։ Այդ պահին է բացայայտւում, որ սա հէնց այն վայրն է, որտեղ պէտք էր վաղուց լինել. վայր, որտեղ լինելն իրական ու բնական է դարձնում լինելը։

Հայրենադարձի հաւատարմութիւնը տոգորւում է թէ՛ յիսուսականների եւ թէ՛ մովսիսականների մէջ, բայց սուրբ քաղաքն ինքնին անհաւատարիմ է. հաւատարմութիւն, հնազանդութիւն եւ նուիրում պահանջող բոլորից։

* * *

Փակել եմ աչքերս ու լսում եմ գալիլեական լճակի մօտ քարոզող երիտասարդ սքեմաւորի ձայնը, թռչունների գարնանային զրնգուն կանչը եւ ջրերի մեղմ դարձդարձումը։ Յիսուսի երիտասարդութիւնն է այստեղ, նրա եռանդը, գեղջուկ աշխոյժը, նրա նախաերուսաղէմեան անհոգութիւնը։

* * *

Բոլո՞րն են զգում, որ արդէն եղել են այստեղ։ Հոգեհարազատութիւնն ուղեկից է եւ ամէն բան առ աչօք ծանօթ։ Պատճառը այս քաղաքում հիւսուած մի, հաւատարիմ, արդար, փրկող Աստծոյ նկատմամբ հաւատքի անընդհատութիւնն է, ինչպէս նաեւ շնորհի եւ օրէնքի, մարդու եւ հակամարդու, տիրապետութեան եւ ազատութեան, վէ-

ճի եւ համաձայնութեան միմեանց հակազդող շարունակականութիւնը։ Այո՛, քաղաքը այցելուին հարազատ է, բայց այն ինքնին հարազատութիւն չի փափաքում. այն մարդամօտ չէ, քանի որ մարդիկ հետաքրքասէր են, իսկ ինքը՝ մեկուսի գոյող խորհուրդների գաղտնարան։ Այցելուներն, ի հարկէ, իրենցն են համարում այն, բայց քաղաքը խառնուածքով անպատկան է, անենթակայ, նուաճումներ չհանդուրժող։ Թէ՛ հարազատական նուաճումներ, թէ՛ մտաւոր եւ թէ՛ զգայական նկրտումներ չախորժող։ Նրան վաղուց ամուր գրկած պարիսպներն ու խիտ տները բնաւ չեն կաշկանդում։ Կրօնական թշնամանքը, ազգայնական բնազդները, ոստիկանական հսկումը նրա համար ոչինչ են։ Նրա աչքերում դրանք բնական են, քանի որ նոյնութիւններ են, այն են՝ ինչի մէջ չկայ «նոր»-ի վտանգը։

Վաղուց ի վեր Աբրահամն իր սրտում բոլորի նման այս քաղաքի նկատմամբ հարազատութիւն էր ապրել։ Թէկուզեւ մեռած Սառայի միջոցով, մի վերջին անգամ խորամանկելով՝ նրան այստեղ էր թաղել եւ հաւատացել, որ ինքն ու իր բազմահազար սերունդը բաժին կ'ունենան դրանում։ Սակայն ո՞ր սերունդը. Իսմայէլի՞, Իսահակի՞, թէ Յիսուսի՞։

Մոխրանալով եւ յառնելով, այսօր՝ երկրորդ հազարամեակում, նա՝ երիտասարդ փիւնիկի նման, մէկ վեր ճախրելով, մէկ վար՝ դէպի բլուրներ ազատ անկումով վստահ թառել է երկինք ձգտող բարձունքների վրայ. կարծես ոչինչ էլ չի եղել։

Յիսուսն Աբրահամից առաջ էր սիրում այս քաղաքը եւ յետոյ էլ իր թեւերի տակ հրաւիրելով՝ պատսպարել փորձում։ Սաղէմն էլ իր հերթին հոգեկանութիւնը, ազատութիւնը, նորը, յայտնութենականը, ինքնուրոյնը չէր հանդուրժելու եւ գալիլեական գիւղերից եկած Յիսուսին արհամարհանքով իր պարիսպներից դուրս խաչելու էր։

* * *

Մօտենում եմ Բեթղեհէմին՝ մանկան ծննդեան յաւիտենական բերկրանքին։ Մայրութեան, նոր ծննդի եւ ընդհանրապէս կեանքի յարահոսումն ու վերակազմումն այստեղ ամենուր է։

* * *

Սոֆիի մայրը հրեայ է, իսկ հայրը գերմանացի։ Ինքն իրեն հրեայ է համարում, բայց ոչ կրօնական։ Աշխատում է Պաղեստինի դպրոցականների համար կրթական ծրագրեր գրելով. դա իր համար մարդասիրութիւն է ընդդէմ հրեական յայտնի ոճիրների (ոճիրների զոհերի, որոնք ոճիրներ են գործում)։ «Պապս, որ ողջ կեանքն այստեղ է ապրել, ինձ ասել է, որ եթէ հրեայ չլինէր հակասեմիտ կը լինէր», - ասում է Սոֆին՝ սպասելով իմ արձագանգին։ Շփոթուած ժպտում եմ։

* * *

Երուսաղէմը լարումների ոստան է։ Ապրումներն առատութեամբ գլխապտոյտ են առաջացնում։ Մէկ անգամ փողոցով անցնելը սրտիդ մէջ կարող է միահիւսել տրամադրութիւնների, բնաւորութիւնների, դէմքերի, եւ աւելին՝ քաղաքակրթութիւնների, բարոյականութիւնների, գաղափարաբանութիւնների պրկուած մի կծիկ։ Իսկ փողոցի վերջում, երբ դու վայրկեաններ անց միայնակ ես ու չես հասցրել բերանդ, միտքդ, սիրտդ բացել այս պրկմանը հակազդելու համար, ո՞ւր ուղղորդել այդ ամէնը ... ու լարումը գնում է ներս, սկսում է այլազանօրէն կերտել նոր երուսաղէմադրոշմ ներաշ-

խարհիդ։

* * *

Տառապանքը սքողուած է սուրբ քաղաքում։ Այն սիրում է սոսկ սրբազնութիւն, կատարելութիւն, օրէնքներ եւ չի ցանկանում ուշադրութիւն դարձնել ցաւին, անցողիկութեանը, խնդրանքներին։ Դրա համար բոլորի ուշադրութիւնից ծպտեալ, որեւէ մէկի նուիրական եւ գեղագիտական զգացմունքներին խանգարելուց զգուշանալով՝ տառապեալ հոգիները, իրենց հիւանդ, օրհասականօրէն ախտահար հարազատներին երկիւղալից մօտեցնում են սրբատեղիներին՝ որպէս վերջին միջոց փրկութեան, իրենց սիրոյ ապացոյցի եւ խղճի անհնար փարատման։ Եւ ոմանք զուգահեռաբար նոր ապրումների եւ տեսարժան վայրերի ետեւից ցցուն շրջում են, վայելում լոկ զանազան զգացական պրկումներ՝ կրօնական, գեղապաշտ, այլ։

Ի՞նչ է անհրաժեշտ հասկանալու համար, որ այս ոստանի սրբատեղիները վերպատմական են, վեր-նիւթական։ Նրանք նորոգւում ու նորանում են այցելուների սրտերով, արցունքով, աղերսով։ Դրանց մէջ միայն Յիսուսի, Աստծոյ Որդու, Անանց Խօսքի, Անմռունչ Գառան ներկայութիւնը, աղօթքը, հեծկլտանքը, խինդը, խանդը, ձգտումն ու սպառումը չէ, այլեւ բոլոր նրանց, որոնք ապրեցին ու կրեցին այդ ամէնը այս վայրն այցելելիս եւ առանց այցելութեան։

* * *

Հրեաները գրի/գրքի ժողովուրդ են եւ միակ բանը, որ նրանց զանցում է գրից երաժշտութիւնն է։ Սրճարանում լսում ենք մի կարճլիկ հրէուհու հոսուն ձայնը, որ արտացոլում է ամերիկեան յայտնի երգեր։ «Իմացի՛ր, սա անսուրբ մարդկանց Սուրբ Քաղաքն է»։ Սոֆին դա ասում է առանց երկար մտածելու կամ զգացմունքների, ինքնաբերաբար, ասացուածքի պէս։ Նորից ժպտում եմ ու մտածում, որ ինձ դրա մասին պէտք էր շուտ ասել, չէ որ ես արդէն մեկնում եմ։

* * *

Գեթսեմանին. այն Քրիստոսի կեանքում անպայման պէտք է լինէր։ Այն միակ հակակշիռն է քառասնօրեայ գերմարդկային փորձութեան։ Գեթսեմանին բոլորի քաղաքից դուրս է, ուրեմն նաեւ օրէնքից ու կանոններից ազատ, ճկուն ու հեզ ձիթենիների մէջ, որոնք կը հասկանան, կ՚ընդունեն, կը լսեն, որքան ուզես քեզ կը լսեն, կը սփոփեն։ Յիսուսը չէր կարող արնաշիթ աղօթել, տառապանաց բաժակից հրաժարուել Երուսաղէմում, օրէնքի քաղաքում. Երուսաղէմը դա թոյլ չէր տայ։

* * *

Վերջին անգամ եմ տեսնում Աշոտին։ Միայնակ ենք։ Այս անգամ գլուխ կախ է սկսում խօսել։ (Մինչ այդ սեւեռուն հայեացքը միշտ աչքերիս մէջ էր)։ Խոհանոցում արագ-արագ նոյն գործն է անում։ Գիտի, որ մեր վերջին հանդիպումն է. պէտք է խոստովանի, բացատրի իր սրտի ցաւը։ Շուրթերը դժկամօրէն շարժելով, գրեթէ անլսելի ասում է, որ երիտասարդ եղբայրը, իր երիտասարդ եղբայրը զոհուել է աւտովթարում (դրա մասին լսել էի տարիներ առաջ)։ Վարդապետ է եղել, սիրուած ու ոգեշնչող, բոլորին նուիրուած։ Մնացածը ասում է ասելու համար...։

Միմեանց յաջողութիւն չենք ասում, ձեռք չենք սեղմում, դրա կարիքը չկայ, դրա

մէջ կարող է կեղծիք լինել։ Յակոբեանց վանքի ամէն սքեմաւոր, որքան էլ Աշոտը դա թաքցնի ինքն իրենից, իրեն իր եղբօրն են յիշեցնում։ Աշոտը սիրում է բոլորին, իր սիրտը տրորող եղբայրական կարօտը նրանցից է փորձում առնել։ Բայց չէ՞ որ իր եղբայրը անփոխարինելի է, հաւասարը չունեցող ... իսկ ինքը ինքն իրեն չի մխիթարելու, ինքնասփոփանքով չի զբաղուելու, դա սիւնեցու համար չէ։ Աշոտն իր վերքերով է ապրելու...

* * *

Այստեղ երկինքը կախուած է։ Գրեթէ հնարաւոր չէ ինքդ քեզ զգալ երկրի վրայ։ «...Աստուած ստեղծեց երկինքը «եւ» երկիրը». յստակ է, որ Մովսէսը սա գրեց Երուսաղէմից դուրս։ Այստեղ նա «եւ»-ը չէր տեսնելու։ Այստեղ «եւ» չկայ։ Միազանգուածութեան, ամբողջակալութեան պայքարը այստեղ է հրաւիրել հին ու նոր թագաւորների, կայսրերի, զօրավարների, մարգարէների, բայց նրանք բոլորն էլ ձախողուել են։ Հոգի «եւ» մարմին, միտք «եւ» սիրտ, Աստուած «եւ» մարդ, լուութիւն «եւ» ձայն, զօրութիւն «եւ» նուաղում, պայքար «եւ» պարտութիւն. յունական երկուութիւնը, «եւ»-ը կամ «կամ»-ը անվաւեր են այստեղ։ Մէկութեան, միութեան, ամբողջութեան քաղաքն է Սաղէմը։ Այստեղ է, որ մեր օրերի մի հայ վարդապետ պէտք է հասկանար, որ «եւ»-ը հակաստուածային է, յօրինուածք է, հակաքրիստոսեան, ուրեմն՝ հակամարդկային է։ Իրականութիւնը, բնութիւնը, կեանքը մի է։ Նա համայնի ամբողջութիւնը պէտք է ջատագովէր ու դրա համար մոռացուէր։

Երուսաղէմը յիշողութիւնների դարան է, բայց ինքը ոչ ոքի չի յիշում, իր համար ամէն նոր բան միեւնոյնն է։

Այստեղ հնարաւոր չէ ապրել առանց սիրոյ, չնայած այն վտարում է սէրը, քանի որ սէրը ամէն օր նոր է, եւ սիրուց է ծնւում նորը, սիրուց է բխում ամբողջը։

ՍԱՄՈՒԷԼ ՍՐԿ. ՊՕՂՈՍԵԱՆ

Սաղէմ, Մեծ Պահք, 2023